«Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

..... 2023 թվականի N ..... – Ն

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ. ապրիլի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

_____ _____-ի N_____-Ն որոշման

Պ Ա Ր Զ Ե Ց Վ Ա Ծ Կ Ա Ր Գ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ

ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ հարկային մարմնում պարզեցված հաշվառման կանգնելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգը վերաբերում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձանց, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով համարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:
3. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում պարզեցված հաշվառման համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անձնական գրասենյակ էջից ներկայացվում է Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման դիմում (այսուհետ՝ Դիմում)՝ համաձայն սույն կարգին կից ձևի:
4. Դիմումը ներկայացնելուց հետո համակարգը դիմողին շնորհում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ):
5. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը Դիմում չի ներկայացնում ՀՎՀՀ ունենալու դեպքում և անձնական գրասենյակ էջում ցուցադրվում է ֆիզիկական անձի ՀՎՀՀ-ն:

ՁԵՎ

ԴԻՄՈՒՄ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանունը

_____

_____

2. Ֆիզիկական անձի հաշվառման վայրը

_____

3. Ֆիզիկական անձի հեռախոսահամար _____
4. Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, ՀԾՀ-ն _____
5. Դիմումի ներկայացման ամսաթիվը _____